ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

«Հայաստանի Ավտոմոբիլային Ֆեդերացիա»
հասարակական կազմակերպության
նախագահ՝

Արսեն Մանուկյան _____

«10» մարտի 2025թ.

ՀԱՖ
FAA
00410292

ԱՐԱԳԸՆԹԱՑ ՁԵՎԱՎՈՐ ՎԱՐՄԱՆ (GYMKHANA) ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ք.Երևան

Սույն Կանոնակարգը կազմվել է Միջազգային Ավտոմոբիլային Ֆեդերացիայի (ՄԱՖ) և «Հայաստանի Ավտոմոբիլային Ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (ՀԱՖ) Սպորտային կանոնադրության դրույթների համաձայն:

Սույն Կանոնակարգի դրույթների փոփոխությունը և լրացումը ՀԱՖ-ի իրավասությունն է:

Սույն Կանոնակարգի դրույթները գործում են Ձևավոր վարում Էկո միջոցառման (այսուհետ՝ Միջոցառում) անցկացման բոլոր փուլերի համար:

Սույն Կանոնակարգը ուժի մեջ են մտնում ստորագրման պահից:

1. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ

«ԱՐԱԳԸՆԹԱՑ ՁԵՎԱՎՈՐ ՎԱՐՄԱՆ (GYMKHANA)» ավտոմեքենա վարելու հմտության և բնապահպանության ապահովմանը ուղղված միջոցառում է, իր մեջ նաև ներառում է Էլեկտրիկ մեքենաների դաս: Միջոցառումը անցկացվում է մրցուղու վրա, որն ունի կամայական կոնֆիգուրացիայի ձև, փակ է արտաքին երթևեկության համար, նշագրված է կոներով, ազդանշանային ժապավեններով, ճանապարհային ազդանշանների ինվենտարով և այլնով: Միջոցառումը անցկացվում է ժամանակի վրա՝ մինիմալ խախտումներ արձանագրելով:

«ԱՐԱԳԸՆԹԱՑ ՁԵՎԱՎՈՐ ՎԱՐՄԱՆ (GYMKHANA)» միջոցառման նպատակներն են.

- անկանխատեսելի իրավիճակներում ավտոմեքենա վարելու հմտությունների կատարելագործումը,
- վարորդական հմտությունների և ավտոմեքենայի շահագործման տեխնիկական մշակույթի բարելավումը,
- ճանապարհային երթևեկության կանոնների խախտումներին հակազդելու ոլորտում գիտելիքների և հմտությունների ձևավորումը,
- բնապահպանական անվտանգության ապահովում ավտոսպորտում՝ նվազացնելով շրջակա միջավայրի վրա ազդեցությունը:

Միջոցառման նպատակներից մեկն է Էկոլոգիապես անվտանգ էլեկտրամոբիլների մասսայականացումը Հայաստանում:

2. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ

2.1 Միջոցառման Կազմակերպիչն է «Հայաստանի Ավտոմոբիլային Ֆեդերացիա» ՀԿ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ):

2.2 Կազմակերպիչը միջոցառման յուրաքանչյուր փուլի համար ձևավորում է Կազմկոմիտե և Գլխավոր Մրցավարական Կազմ, որը հաստատվում է միջոցառման յուրաքանչյուր փուլի Միջոցառման ծրագրում:

2.3 Կազմկոմիտեն միջոցառման յուրաքանչյուր փուլի համար կազմում է Միջոցառման ծրագիր, որտեղ նշվում է անցկացման վայրը, ժամկետը և միջոցառման հետ կապված այլ տեղեկությունները:

2.4 Միջոցառման ծրագիրը և սույն Կանոնակարգը տրամադրվում են միջոցառման Մասնակիցներին ստորագրությամբ ծանոթանալու համար:

2.5 Կազմկոմիտեն միջոցառման ողջ ընթացքի (Մասնակիցների հաստատում, անվտանգության ապահովում, մեկնարկ, մրցուղի և ավարտ) համար կրում է պատասխանատվություն:

2.6 Միջոցառման ֆինանսավորումը կատարվում է անդամավճարների, գովազդատուների, հովանավորների և այլ միջոցների հաշվին:

3. ԲՐԻՖԻՆԳ

Կազմակերպիչը միջոցառման անցկացման օրը պարտավոր է իրականացնել պաշտոնական ժողով՝ բրիֆինգ, Մասնակիցների հետ, որոնց թույլատրվել է մասնակցել միջոցառմանը:

Միջոցառման Մասնակիցները պետք է ծանոթանան Մրցուղու սխեմանյին, մրցուղու «սկիզբ»-ն և «ավարտ»-ին, մրցուղու երկայնքով շարժման ուղղությանը:

Բրիֆինգին մասնակցելը պարտադիր է բոլոր Մասնակիցների համար:

4. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

4.1 Միջոցառմանը թույլատրվում է մասնակցել 18 տարին լրացած վարորդներին, ովքեր ունեն ՀՀ առնվազն «B» կարգի վարորդական իրավունք և հայտագրվել են:

4.2 Մասնակիցները, ովքեր Կազմակերպիչի կարծիքով չեն տիրապետում պատրաստվածության բավարար մակարդակի և վտանգ են ներկայացնում մրցողների, հանդիսատեսի, շրջակա միջավայրի և այլնի համար, Կազմակերպիչի որոշմամբ կարող են հեռացվել միջոցառումից:

4.3 Բոլոր դասերում Մասնակիցների նվազագույն քանակի դեպքում դասերի կայացման հարցը որոշում է Կազմակերպիչը:

4.4 Նույն Մասնակիցը կարող է տարբեր ավտոմեքենաներով մասնակցել տարբեր դասերի, իսկ նույն մեքենան նույն դասի շրջանակներում կարող է վարել միայն մեկ վարորդ:

4.5 Մասնակիցներին և մասնակից թիմերին (վարորդ, տեխ. սպասարկող անձնակազմ և այլն) խորհուրդ է տրվում հագնել ՖԻԱ 8856-2000 ստանդարտին համապատասխանող համազգեստ՝ կամբինիզոն, սաղավարտ, կոշիկներ, ձեռնոցներ և այլն:

4.6 Միջոցառման ժամանակ վարորդը պետք է ամրագոտի կապի, հակառակ դեպքում վարորդին հաշվարկվում է տուգանք:

4.7 Գրանցման ժամանակ տրված մեկնարկային երկնիշ համարը փակցվում է ավտոմեքենաների աջ վերին մասում: Առանց մեկնարկային համարի Մասնակիցները չեն կարող մասնակցել միջոցառմանը:

4.8 Մասնակիցները պարտավոր են ենթարկվել մրցավարների բոլոր հրահանգներին և դիտողություններին, հակառակ դեպքում Մասնակիցները կհեռացվեն տվյալ միջոցառումից:

4.9 Մասնակիցները պատասխանատու են իրենց վարած մեքենայի տեխնիկական անվտանգության համար:

5. ԹՈՒՅԼԱՏՐՎՈՂ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԸ

5.1 Բոլոր մեքենաները պետք է գտնվեն լավ տեխնիկական վիճակում և համապատասխանեն տրանսպորտային միջոցների շահագործման ընդունման հիմնական կանոնակարգերին:

5.2 Մեքենայում գտնվող բոլոր իրերը պետք է ամրացված լինեն ապահով կերպով:

5.3 Մեքենան փոխելու դեպքում Մասնակիցը պարտավոր է մեկ թեստ-դրայվ վարել մրցուղու գնահատված հատվածով, որի արդյունքում Մասնակիցը կարող է հրաժարվել շարունակել իր մասնակցությունը այս մեքենայով:

6. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Յուրաքանչյուր փուլի համար գրանցումը իրականացվում է

- www.faa.am պաշտոնական կայքում՝ ձևաթղթի լրացման միջոցով (կցված է Հավելված 1. Մասնակցության Հայտ), կամ
- միջոցառման օրը ներկայանալով միջոցառման քարտուղարին և տեղում լրացնելով Մասնակցության Հայտը:

Մասնկցության Հայտը լրացնելու համար Մասնակիցը պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը և տվյալները.

1) անձնագիրը,
2) վարորդական իրավունքը,
3) ավտոմեքենայի տեխնիկական անձնագիրը,
4) բջջային հեռախոսի համարները:

6.2 Յուրաքանչյուր փուլի համար գրանցվելու վերջնաժամկետը նշվում է Միջոցառման ծրագրում:

6.3 Միջոցառման մասնակցության մուտքավճարը վճարվում է միջոցառումից մեկ օր առաջ ֆեդերացիային հաշվին փոխանցման միջոցով կամ միջովառման օրը միջոցառման քարտուղարին:

Կազմակերպիչն իրավունք ունի Մասնակցին ազատել մասնակցության մուտքավճարից:

Միջոցառմանը մասնակցելու մուտքավճարը չի վերադարձվում: Բացառություն են կազմում հետևյալ դեպքերը՝

• Մասնակիցներ, որոնց Մասնակցության Հայտերը մերժվել են,

• Միջոցառումը չկայանալու պատճառով՝ եղանակային կամ այլ ֆորս-մաժորային պայմանների դեպքում:

6.4 Մասնակիցների վարչական վերահսկումը իրականացվում է միջոցառման տարածքում:

6.5 Միջոցառման օրը մասնակիցը պետք է մոտենա միջոցառման քարտուղարին և ներկայացնի անձը հաստատող փաստաթուղթ, վարորդական իրավունք և մեքենային տեխ.անձնագիր:

6.6 Միջոցառման քարտուղարը Մասնակցի փաստաթղթերը ստուգելուց հետո, Մասնակցին տրամադրում է մեկնարկային համար և հովանավորող կազմակերպությունների ստիկերներ, որը անհրաժեշտ է փակցնել ավտոմեքենայի վրա:

7. ՄՐՑԱԵՐԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԸ

7.1 Միջոցառումը մեկ տարվա ընթացքում կարող է բախկացած լինի մի քանի փուլերից:

7.2 Պաշտոնական մեկնարկից առաջ յուրաքանչյուր Մասնակցին թեստ-դրայվի իրավունք է տրվում՝ մրցուղուն ծանոթանալու համար:

7.3 Մրցաերթը իրականացվում է Մրցուղու սխեմայի համաձայն:

7.4 Մասնակիցը մեկնարկից մինչև վերջնագիծը պարտավոր է երթուղին անցնել հնարավորին չափ արագ և առանց խախտումների: Երթուղու անցման ժամանակին գումարվում է տուգանային միավորներ (վայրկյան) յուրաքանչյուր թույլ տված սխալների համար:

7.5 Մրցուղու սխեմայով նախատեսված մրցագծի խախտումը և/կամ չկատարումը (կոնի բաց թողումը) հանգեցնում է Մասնակցի որակազրկման, կոնի ընկնելու կամ տեղաշարժի դեպքում՝ տուգանքի:

7.6 Յուրաքաքնչյուր փուլում Մասնակցին տրամադրվող հաշվարկային մեկնարկների քանակը որոշում է Կազմակերպիչը:

7.7 Փուլերում հաշվարկը կատարվում է հետևյալ կերպով՝ Մասնակցի կատարած մրցաերթերից ընտրվում է լավագույն նվազագույն արդյունքը:

7.8 Երկու կամ ավելի Մասնակիցների ցուցաբերած ժամանակների բացարձակ հավասարության դեպքում նշանակվում է լրացուցիչ մրցահերթ տվյալ Մասնակիցների միջև:

7.9 Փուլերում բոլոր Մասնակիցները ստանում են հաշվարկային միավորներ ըստ զբաղեցրած տեղերի միավորների «Հավելագրման աղյուսակ»-ի համաձայն՝ ելնելով մասնակիցների քանակից:

7.10 Փուլի հաղթող և մրցանակակիրներ են ճանաչվում նվազագույն արդյունք ցուցաբերած Մասնակիցները:

7.11 Առաջնության հաղթող և մրցանակակիր են ճանաչվում այն Մասնակիցները, ովքեր բոլոր նախատեսված փուլերում ցույց տրված արդյունքների համապատասխան ստացած միավորների առավելագույն գումարով:

7.12 Փուլի հաղթողները և մրցանակակիրները պարգևատրվում են ՀԱՖ-ի համապատասխան I, II և III կարգի դիպլոմներով և/կամ մեդալներով, իսկ Առաջնության հաղթողը նաև՝ Գավաթով:

8. ՄՐՑԱՎԱՐՆԵՐԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

8.1 Մրցավարները որակավորված մասնագետների խումբ է, որոնք նշանակվել են մրցուղու վրա Մասնակիցներին գնահատելու համար: Մրցավարները պետք է գտնվեն այնպիսի անվտանգ վայրում, որտեղից տեսանելի է մրցուղին:

8.2 Մրցավարական սեղանները պետք է ապահովված լինեն համապատասխան գործիքներով՝ մասնակիցներին գնահատելու և հետագայում արձանագրություն կազմելու համար:

8.3 Մրցաերթի ընթացքում Մասնակցի նախնական արդյունքները գրանցում է էլեկտրոնային վայրկյանաչափը: Վերջնական արդյունքը ստանալու համար էլեկտրոնային վայրկյանաչափի տվյալին գումարվում են նաև տուգանքները:

9. ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

9.1 Մասնակցության Հայտը ներկայացնելիս Մասնակիցը կամ նրա ներկայացուցիչը պետք է ամենայն ճշտությամբ տեղեկացնի իր ավտոմեքենայի շարժիչի ծավալի և շարժիչի ձևափոխված դետալների մասին տեղեկությունները:

9.2 Միջոցառման մասնակցող ցանկացած ավտոմեքենա չի կարող լքել միջոցառումը մինչև դրանց պաշտոնական ավարտը կամ Կազմակերպիչի թույլատվությունը: Այդ պահանջի չկատարման դեպքում Մասնակցի արդյունքը կզրոյացվի:

9.3 Մինչ մեքենայի տեխնիկական զննում սկսելը Մասնակիցը պարտավոր է լիովին վերջացնել նախապատրաստական աշխատանքները:

9.4 Խստիվ արգելվում է մասնակցել մրցաերթին թափքի մասերի բացակայության պայմաններում՝ բեռնախցիկ, կապոտ, ապակի, դռների, առանց ամրագոտի և այլն:

9.5 Թափքի տեսանելի և անտեսանելի փոփոխություններից բխած հետևանքների համար պատասխանատվություն է կրում Մասնակիցը:

9.6 Եթե Մասնակցի մեքենան գերթեթևացրած է կամ հիմնովին ձևափոխված է, ապա այդ ավտոմեքենան պետք է ունենա ՀԱՖ-ի կողմից հավաստագիր և մասնակցի ավելի բարձր դասում:

9.7 Մասնակցի կողմից ավտոմեքենայի վերաբերյալ սխալ տեղեկությունների ներկայացման դեպքում վերջինս որակազրկվում է և հեռացվում մրցաերթից:

9.8 Եթե մրցուղու վրա հայտնվել են տեխնիկական հեղուկի հետքեր, որոնք այն դարձնում են վտանգավոր, ապա արգելվում է իրականացնել մրցաերթը տվյալ մրցուղում մինչև թերությունների ամբողջական վերացումը:

10. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

10.1 Միջոցառումը անցկացվում է փակ տարածքում՝ արգելափակված ավտեմեքենաների կողմնակի երթևեկությունից:

10.2 Միջոցառումն անցկացնելիս անհրաժեշտ է ապահովել հանդիսատեսի, մասնակիցների և սպասարկման անձնակազմի առավելագույն անվտանգությունը: Այն հատվածներում, որտեղ հանդիսատեսի գոտին մոտենում է մրցուղուն, Կազմակերպիչը պետք է տեղադրի պաշտպանիչ արգելափակոցներ: Անհրաժեշտ է նաև հաշվի առնել մրցուղու առանձնահատկությունները, տեղանքը, կառույցները և այլ գործոններ, որոնք կարող են ազդել անվտանգության վրա:

10.3 Մրցուղուն մոտենալիս և հեռանալիս Մասնակիցները պարտավոր են ղեկավարվել ճանապարհատրանսպորտային կանոններով և առավերագույնը ապահովեն մյուս մասնակիցների և երրորդ անձանց անվտանգությունը:

10.4 Միջոցառման ընթացքում մրցուղու վրա ցանկացած պարապմունք թույլատրվում է միայն Կազմակերպիչի կողմից: Սույն կետի խախտման համար Մասնակիցները որակազրկվելու են:

10.5 Ստորագրելով միջոցառման Մասնակցության Հայտը՝ Մասնակիցը հայտարարում է, որ ընդունում է միջոցառման անցկացման պայմանները և դրա կանոնակարգը, Կազմակերպիչն ազատվում է պատասխանատվությունից միջոցառման ընթացքում իրեն և նրա գույքին պատճառված հնարավոր կորուստների և վնասների համար, և Մասնակցի կողմից երրորդ անձանց և նրանց գույքին պատճառված կորուստների և վնասների համար:

10.6 Հանդիսատեսի մեքենաները պետք է լինեն մրցուղուց դուրս:

10.7 Մրցաերթից առաջ և ընթացքում ոգելից խմիչք օգտագործելը խստիվ արգելվում է:

10.8 Միջոցառման ընթացքում անհրաժեշտ են շտապօգնության, ոստիկանության և հրշեջ մեքենաների առկայությունը:

11. ԳՈՎԱԶԴ

11.1 Մեկնարկային համարները Մասնակիցներին տրվում են սույն Կանոնակարգի համաձայն՝ Կազմակերպիչի կողմից: Մեկնարկային համարի բացակայության դեպքում ավտոմեքենան չի թույլատրվում մրցաերթին:

11.2 Մասնակիցը պարտավոր է մեքենայի երկու կողմերում և հետևի դիմապակու վրա ունենալ մաքուր տարածք, Կազմակերպիչի կողմից տրամադրվող պիտակների համար (ընդհանուր հաշվով 60x40սմ՝ ամեն կողմից):

Մեքենաների վրա պարտադիր են հետևյալ պիտակները.

- լոգոներ (չափերը որոշվում են Կազմակերպիչի կողմից):
- մեկնարկային համարներ (նվազագույն չափը և տառաձևը որոշվում են Կազմակերպչի կողմից), որոնք փակցվում են ավտոմեքենաների վրա, ճակատային ապակու:

11.3 Մասնակցի կողմից ցանկացած գովազդի տեղադրումը և գովազդային առևտուրը, պրոմո ակցիաների կազմակերպումը իրականացվում է Կազմակերպիչի թույլտվությամբ:

11.4 Մասնակիցները իրավունք ունեն տեղադրել իրենց մեքենաների վրա ցանկացած գովազդ, եթե դա.

- Չի արգելվում ՀՀ օրենսդրությամբ,
- Չի հակասում էթիկայի և բարոյականության նորմերին,
- Չի հանդիսանում քաղաքական կամ կրոնական,
- Չունի ահաբեկչական բնույթ,
- Չի հակասում Կանոնակարգին,
- Չի փակում վարորդի տեսադաշտը, կամ այլ եղանակով խանգարում նրան:

11.5 Մասնակիցը կարող է վճարել 50.000 ՀՀ դրամ և հրաժարվել փակցնել Կազմակերպիչի կողմից տրամադրված պիտակները:

11.6 Մասնակիցները բրենդավորած մեքենաներ (գովազդային կամ այլ պիտակներ փակցված) ներկայացնելու դեպքում յուրաքանչյուր միջոցառմանը մուտք գործելու և մասնակցելու համար պետք է վճարեն 50.000 ՀՀ դրամի չափով վճար:

12. ԵՂԱՆԱԿԱՅԻՆ ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՊԱՅՄԱՆՆԵՐ

12.1 Անձրև բառի տակ հասկանում ենք ցանկացած մթնոլորտային տեղում, որը հեղուկ կամ պինդ վիճակում ընկնում է երկնքնից տարբեր մակերևույթների և տարբեր առարկաների վրա:

12.2 Անձրևի դեպքում ղեկավարը անմիջապես դադարեցնում է միջոցառումը: Մրցուղին ազատվում է: Ոչ պակաս քան 30 րոպեն մեկ անգամ Կազմակերպիչը տեղեկացնում է մասնակիցներին մրցուղու վիճակի մասին և միջոցառման շարունակման կողմնորոշիչ ժամանակի մասին:

12.3 Եթե անձրևը շարունակվում է մեկ ժամից ավել, Կազմակերպիչը հայտարարում է արտահերթ Բրիֆինգ՝ ռեզերվային ժամանակով, միջոցառման տեղափոխման կամ չեղյալ հայտարարելու որոշման կայացման համար:

12.4 Բացի անձրևը այլ բնակլիմայական ազդեցությունների առաջացման դեպքում, որոնք կարող են խաթարել միջոցառման բնականոն ընթացքը, կամ վտանգ հանդիսանալ ներկայացուցիչների, մասնակիցների, հանդիսատեսի և ալնի համար, Կազմակերպիչը կարող է հայտարարել դադար կամ հայտատարել միջոցառման ավարտ, որից հետո նույնպես կհայտարարավի արտահերթ Բրիֆինգ:

13. ՀՆԱՐԱՎՈՐ ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՄՐՑՄԱՆ ԷԹԻԿԱՆ

13.1 Կազմակերպիչի կողմից իրականացվող գործողությունների և կայացրած որոշումների հետ տարաձայնության դեպքում Մասնակիցները իրավունք ունեն բողոքարկելու:

13.2 Փուլի արդյունքների հրապարակումից հետո բողոքները պետք է ներկայացվեն 15 րոպեի ընթացքում՝ գրավոր տեսքով:

13.3 Մասնակիցը իրավունք ունի բողոքարկել նաև այն դեպքում, երբ ունի հիմնավոր կասկածներ այլ Մասնակցի (ների) կողմից կեղծ տվյալների ներկայացման և/կամ այլ հիմնավեր պատճառների դեպքում:

13.4 Այն Մասնակիցը ով կեղծ տվյալ կտրամադրի ավտոմեքենայի վերաբերյալ, որը կարող է խոչնդոտել արդար մրցակցության պայմաններին և այդ փաստը կապացուցվի Կազմակերպիչի, կամ բողոքարկողի կողմից, ապա մեղավոր կողմը կտուգանվի 50.000 ՀՀ դրամի չափով և կորակազրկվի:

13.5 Մեկնարկային գոտում բացի վարորդից, վարորդի կողմից հրավիրված տեխնիկական օգնություն ցուցաբերող թվով 1 անձից և Կազմակերպիչի ներկայացուցիչներից իրավունք չունեն գտնվելու այլ անձիք:

13.6 Այն Մասնակիցները ովքեր չենթարքվեն Մրցավարների պահանջներին, դրոշի հրահանգներին կհեռացվեն միջոցառումից:

13.7 Այն Մասնակիցը կամ թիմը, որը միջոցառման ընթացքում կցուցաբերի ոչ կոռեկտ և ոչ սպորտային պահվածք Կազմակերպիչի կողմից կհեռացվի միջոցառումից:

14. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՎԱՐՏԸ

14.1 Միջոցառման ավարտին Գլխավոր Մրցավարական Կազմը ներկայացնում է Մասնակիցների արդյունքները:

14.2 Երեք լավագույն նվազագույն արդյունք ցուցաբերած Մասնակիցները պարգևատրվում են համապատասխան կարգի դիպլոմներով և/կամ մեդալներով՝ I, II և III տեղերի համար:

14.3 Միջոցառման ավարտից հետո հինգ օրվա ընթացքում Կազմակերպիչը պետք է ներկայացնի միջոցառման անցկացման վերաբերյալ վերջնական հաշվետվություն: